ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀՀՌՑ-ԷԱՃԱՊՁԲ-18/24» ծածկագրով էլեկտրոնային աճուրդով

վառելիքի /բենզին պրեմիում/ ձեռքբերման

գնահատող հանձնաժողովի գնահատման նիստի

ք. Երևան

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 28.09.2018 ժամը 12.00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Հ. Սարոյանը
Անդամներ՝	Հ. Հարությունյանը
	Ա. Գաբրիելյանը
Հանձնաժողովի քարտուղար՝	Մ. Նիկոլյանը

1. Ընդունել ի գիտություն.

1.1 ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե /Կոմիտե/ 24.08.2018թ. հարցում է ուղարկվել «ՀՀՌՑ-ԷԱՃԱՊՁԲ-18/24» ծածկագրով էլեկտրոնային աճուրդով ընթացակարգի առաջին տեղը զբաղեցրած «ՖԼԵԵՇ» ՍՊԸ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

1.2 Գնահատող հանձնաժողովի 24.09.2018թ. թիվ 2 որոշմամբ, ղեկավարվելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով առաջին տեղը զբաղեցրած մասնակից «ՖԼԵԵՇ» ՍՊԸ–ից eauction.armeps.am համակարգով էլեկտրոնային եղանակով պահանջվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ ներկայացնել Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ սահմանված՝ առաջարկվող ապրանքների անվանումները և տեխնիկական բնութագրերը /ամբողջական նկարագրեր/:

2. Հանձնաժողովն արձանագրեց.

2.1 Կարգով սահմանված ժամկետում Կոմիտեից առաջին տեղը զբաղեցրած «ՖԼԵԵՇ» ՍՊԸ-ի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ ստացվել է դրական եզրակացություն /կցվում է/:

2.2 Սույն արձանագրության 1.2 կետով նշված փաստաթղթերը «ՖԼԵԵՇ» ՍՊԸ–ն eauction.armeps.am համակարգով սահմանված ժամկետում ներկայացվել է Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ սահմանված՝ առաջարկվող ապրանքների անվանումները և տեխնիկական բնութագրերը /ամբողջական նկարագրերը/:

3. Հանձնաժողովը որոշեց.

3.1 Ընտրված մասնակից ճանաչել 1 չափաբաժնով «ՖԼԵՇ» ՍՊ ընկերությունը

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0

3.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը /կցվում է/

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0

Հանձնաժողովի

նախագահ՝ Հ. Սարոյան

անդամներ՝ Հ. Հարությունյան

Ա. Գաբրիելյան

քարտուղար՝ Մ. Նիկոլյան